ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/3702-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-964-20.11.2024-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

Առաջարկում ենք՝

1. Օրենքի նախագծի վերնագրից հանել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ» բառերը:

2. 1-ին հոդվածում՝

ա) «(այսուհետ՝ օրենք)» ձևակերպման մեջ «օրենք» բառը նշել մեծատառով,

բ) 7-րդ հոդվածով նախատեսված լրացումն առաջարկում ենք նախատեսել որպես 1-ին հոդված՝ պահպանելով հոդվածներում կատարվող լրացումների հերթական հաջորդականությունը: Նույն առաջարկը վերաբերում է նաև նախագծի 5-րդ և 6-րդ հոդվածներին:

Հաշվի առնելով վերոգրյալը հոդվածների հաջորդականությունը վերանայվել է:

3. 1-ին (խմբագրված 2-դր) հոդվածում՝ «20-րդ հոդվածի» բառերից առաջ լրացնել «Օրենքի» բառը, «2.1 մասը» ձևակերպումը փոխարինել «2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ մասերը» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախագծով լրացվում են՝ «2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ» մասեր: Միաժամանակ առաջարկում ենք Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացվող նոր՝ 2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ մասերի համարակալումը տեքստից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը:

4. 6-րդ հոդվածում՝ «9.1» գրելաձևը առաջարկում ենք փոխարինել «9.1-ին» գրելաձևով՝ պահպանելով դասական թվականների ճիշտ գրելաձևը:

Միաժամանակ առաջարկում ենք նախագծի 6-րդ հոդվածով լրացվող նոր՝ «9.1» մասի տեքստից առաջ նշել՝ «9.1.» մասի համարը:

5. Հաշվի առնելով օրենքի նախագծի հոդվածների հերթականության փոփոխությունը 8-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «1-ին հոդվածով» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել «2-րդ հոդվածով» բառերը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ